ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԶՈՒԳԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/13

ք. Սպիտակ « 01 » հուլիսի 2021թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ք. Նիկողոսյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՄ-ԷՅ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն «Մ. Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 2 ամիս:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ մարտավարական վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2 490 540 (երկու միլիոն չորս հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 415 090 (չորս հարյուր տասնհինգ հազար իննսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սպիտակ համայնք	«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Սպիտակ, Շահումյան 10
ՀՎՀՀ՝ 06801433	ՀՎՀՀ՝ 06959372
ՀՀ ֆին նախ գործառն վարչ	Հ/Հ՝16032022852300
Համայնքի ղեկավարի	«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
պաշտոնակատար՝ Ք. Նիկողոսյան	Տնօրեն՝ Մ. Մելքոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված թիվ 1
«01 » հուլիսի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԶՈՒԳԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցում						
NN ը/կ	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափ միավ	Քանակ	1 միավ. ընդ արժ. հազ դր.	Ընդհանուր արժեքը հազ դր
1	2	3	4	5		18
		1 Հողային աշխատանքներ				
1	1-1593	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ինքնաթափ մեքենաներին	1000մ³	0,011	500,79	5,51
2	1-961	3- րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	1,1	1,97	2,17
3	1-1634	2 -րդ կարգի բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ³	0,0045	46,53	0,21
4	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0,45	1,01	0,45
5	11-2	Բնահողի տոփանում խճով	100մ²	0,1	30,25	3,02
6	1-1593	Ավելորդ գրունտի բարձում ինքնաթափին	1000մ³	0,0072	500,79	3,61
		էքսկավատորով			0,00	0,00
7	Գ310-10	Տեղափոխում 10 կմ	տն	12,0	1,72	20,63
8	11-11	Բետոնի նախաշերտի կառուցում Վ-7.5 բետոնից	մ³	1,0	30,64	30,64
9	6-21	Բուտոբետոնե հիմքերի կառուցում Վ-7,5 բետ	մ³	6,3	30,37	191,33
10	6-20	Արտաքին պատերի հիմքերի կառուցում	մ³	2,52	40,01	100,81
11	8-13	Հորիզոնական հիդրոմեկուսացում ամրանավորված ց/ա շաղախով	100մ²	0,044	152,83	6,72
					0,00	0,00
12	Շուկա	Ամրան Ա - 1	տն	0,0057	346,27	1,97
13	8-27	Ուղղահայաց հիդրոմեկուսացում բիտումի մաստիկով	100մ²	0,094	67,08	6,31
14	15-9 15-59	Ցոկոլի երեսպատում բազալտե սալերով 3սմ հաստ	մ²	4,3	18,11	77,88
					0,00	0,00
15	7-334	Ցոկոլի երեսապատման համար Ցանցի տեղադրում (առանց նյութի արժեքի)	տն	0,0034	52,54	0,18
16	Շուկա	Ցանց "Ռաբիցա"	մ²	6,3	0,51	3,19

17	6-86	Ցոկոլի երեսապատման համար խարիսխի տեղադրում	տն	0.0048	374,22	1,80
18	7-733	Բազալտե աստիճանների տեղադրում (300*150մմ)	մ	6.4	8,51	54,45
					0,00	0,00
19	11-221	Հարթակի երեսպատում բազալտե սալերով 30մմ	մ²	3,7	10,74	39,72
					0,00	0,00
20	6-86	Խարիսխի տեղադրում 12 մմ	տն	0.0085	374,22	3,18
		Պատեր	տն		0,00	0,00
1	6-106	Միաձույլ ե/բ սյուների կառուցում Վ -20 բետոնից	մ³	0,8	75,74	60,59
2	Շուկա	Ամրան Ա - 1 8մմ	տն	0.0478	346,27	16,55
3	Շուկա	Ամրան Ա - 500C 16մմ	տն	0.0960	358,90	34,45
4	6-106	Միաձույլ ե/բ միջուկի կառուցում Վ -20 բետոնից	մ³	0,4	75,74	30,29
5	Շուկա	Ամրան Ա - 1 8մմ	տն	0.0239	346,27	8,28
6	Շուկա	Ամրան Ա - 500C 14մմ	տն	0.0368	358,90	13,21
7	8-163	Պատերի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ³	2,7	20,92	56,48
		b = 300մմ			0,00	0,00
8	8-59	Պատերին հորիզոնական ցանցի տեղադրում	տն	0.0152	399,22	6,07
9	6-86	Ամրանավորված խարիսխի տեղադրում ԱմրանԱ-500C 12մմ	տն	0.00447	374,22	1,67
		Ծածկ			0,00	0,00
1	6-168	Միաձույլ ե/բ գոտու կառուցում Վ - 15 բետոնից	մ³	1.32	55,06	72,67
2	Շուկա	Ամրան Ա - 1 8մմ	տն	0.0470	346,27	16,27
3	Շուկա	Ամրան Ա - 500C 10մմ	տն	0.0106	358,90	3,80
4	Շուկա	Ամրան Ա - 500C 16մմ	տն	0.0906	342,05	30,99
5	6-161	Միաձույլ ե/բ հեծանների կառուցում Վ - 15 բետոնից	մ³	0.06	68,85	4,13
6	Շուկա	Ամրան Ա - 1 8մմ	տն	0.0033	346,27	1,14
7	Շուկա	Ամրան Ա - 500C 12մմ	տն	0.0052	358,90	1,87
8	6-173	Միաձույլ ե/բ տեղամասի կառուցում Վ - 15 բետոնից	մ³	0.62	56,94	35,30
					0,00	0,00
					0,00	0,00
					0,00	0,00
9	Շուկա	Ամրան Ա - 500C 10մմ	տն	0.08054	358,90	28,91
		Տանիք			0,00	0,00
1	12-288-1	Ջերմամեկուսիչ շերտ խարամից 150մմ	մ³	1,3	6,02	7,82
2	13-225	Գոլորշամեկուսիչ շերտ ռուբերոիդով	մ²	8,6	3,38	29,08
3	12-299	Տ/ա հարթեցուցիչ շերտի կառուցում 20մմ հաստ	100մ²	0.086	74,96	6,45
4	10-70	Ծպեղնատոտքի տեղադրում	մ³	0.44	196,41	86,42
		(մարթակ կանգն մաուերլատ թեքան)			0,00	0,00
5	Շուկա	Չորսու /կավարամած 60*50/	մ³	0.04	149,96	6,00
6	10-201	Փայտե կարկասի մշակում հակահրդեհային	մ³	0,5	7,19	3,59
	37-1	լուծույթով			0,00	0,00
7	10-203	Կավարամածի մշակում հակահրդեհային	100 մ²	0,126	23,49	2,96
	37-3	լուծույթով			0,00	0,00

8	9-24	[illegible] (ԿՊ - 21	100մ²	0,126	382,93	48,25
9	10-22	Ցվիքի երեսապատում տախտակից - 20 մմ	մ²	2,8	3,79	10,61
		Միջնորմներ			0,00	0,00
1	8-140	Միջնորմների շարում 100մմ հաստ բետոնե թեթև բլոկներից	մ³	0,3	25,66	7,70
					0,00	0,00
2	Շուկա	Ամրան Ա - 240C Ø4մմ	տն	0.02131	346,27	7,38
3	11-11	պենզաբլոկի անցքերի լիցք թեթև բետոն Բ - 7.5	մ³	0,30	27,38	8,21
		Դռներ			0,00	0,00
1	Շուկա	Մետաղապլաստե դռան տեղադրում 60 մմ հաստ	մ²	2,94	32,65	95,99
		(օտարերկրյա պրոֆիլ, սպիտակ գույն)			0,00	0,00
2	Շուկա	Մետաղապլաստե դռան տեղադրում վերնափեղկով60 մմ հաստ	մ²	2,97	32,65	96,97
		(օտարերկրյա պրոֆիլ, սպիտակ գույն)			0,00	0,00
		Պատուհաններ			0,00	0,00
1	Շուկա	Մետաղոպլաստե պատուհան 60 մմ	մ²	0.6	33,59	20,15
		հաստ սպիտակ, օտարերկյա պրոֆիլ			0,00	0,00
		11.Հատակներ			0,00	0,00
1	11-2	Բնահողի տուփանում խճով 15-20մմ	100մ²	0,0650	29,80	1,94
2	11-11	բետոնե նախաշերտի կառուցում 100 մմ	մ³	0.650	30,64	19,92
3	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	100 մ²	0,0650	76,80	4,99
		20մմ հաստ			0,00	0,00
4	13-221	Ջրամեկուսիչ շերտի իրականացումCR-60	մ²	6.50	5,99	38,96
5	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	100 մ²	0.065	106,88	6,95
	11-56	30մմ հաստ			0,00	0,00
6	11-135	Կերամիկական սալիկներից հատակների	100 մ²	0,065	634,34	41,23
		կառուցում սոսինձ-4 մմ			0,00	0,00
		Հարդարման աշխատանքներ			0,00	0,00
1	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ²	0,052	182,87	9,51
		բարելաված որակի/g			0,00	0,00
2	15-247-1	Առաստաղի սվաղում գաջի շաղախով	100 մ²	0,024	218,63	5,25
					0,00	0,00
3	15-277-1	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ²	0.0345	445,82	15,38
					0,00	0,00
4	15-660	Պատերի ներկում լատեքսով	100 մ²	0,052	120,29	6,26
		լավորակի			0,00	0,00
5	15-661	Առաստաղների ներկում լատեքսով	100 մ²	0,024	131,71	3,16
		լավորակի			0,00	0,00
6	15-568	Շեպերի յուղաներկում	100մ²	0.0345	100,20	3,46
7	15-247-1	Առաստաղի սվաղում գաջի շաղախով	100 մ²	0.024	223,57	5,37
					0,00	0,00
8	15-661	Առաստաղների ներկում լատեքսով	100 մ²	0,024	131,71	3,16
		լավորակի			0,00	0,00
9	15-256	Պատերի սվաղում ց/ավազային	100մ²	0,210	137,29	28,83
		շաղախով			0,00	0,00
10	15-82	Պատերի երեսապատում կերամիկա-	100մ²	0,210	672,58	141,24
		կան սալիկներով սոսինձի վրա - 4 մմ			0,00	0,00
11	4-85	Կախովի առաստաղի իրականացում (երկշերտ պլաստկով) ցինկապատ կարկասի վրա	մ²	4,1	6,89	28,25
12	ինֆ տեղ	Պլաստմասե անկյունակների տեղադրում	100գծմ	0,180	10,43	1,88
13	ինֆ տեղ	Անկյունակների տեղադրում/սվաղի/	100գծմ	0,088	21,23	1,87

		Սալվածք			0,00	0,00
1	11-2	Բնահողի տոփանում խճով 15-20 մմ	100մ²	0.107	29,80	3,19
2	11-11.	Բետոնե սալվածք 70մմ հաստությամբ	մ³	0.749	30,64	22,95
3	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	100 մ²	0.107	106,88	11,44
	11-56	30մմ հաստ.			0,00	0,00
		Ներքին ջրամատակարարում			0,00	0,00
1	16-261	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում d=20*1.9մմ. փորձարկումով	մ	13	2,30	29,92
2	16-134	Գնդիկավոր փականի տեղադրում d=20մմ	հատ	1	3,32	3,32
3	17-49	Լվացարանի ծորակի տեղադրում	հատ	2,0	4,80	9,59
4	16-130	Զուգարանային ծորակի տեղադ d=15մմ	հատ	2,0	3,99	7,98
5	Շուկա	կցամաս պտուտակով 20	հատ	1,0	1,15	1,15
6	Շուկա	Եռաբաշխիչ 20*20*20	հատ	3,0	0,07	0,20
7	Շուկա	Արտուղղում d=20մմ	հատ	11,0	0,04	0,45
8	Շուկա	Արտուղղում d=20մմ ամրակով	հատ	4,0	0,05	0,19
9	23-113	Անցքերի բացում պատերում	100հտ	0,01	30,41	0,30
10	16-40	Պողպատե պաշտպ պատյան d =40մմ	մ	0,5	1,80	0,90
11	Շուկա	Չժանգոտվող ճկախողովակ d=15մմ	հատ	4,0	1,09	4,37
12	Շուկա	Խողովակների խամուտ	հատ	26,0	0,05	1,26
13	15-614	խողովակների յուղաներկում /2 անգամ/	100 մ²	0,001	104,75	0,06
		/պաշտպանիչ պատյան/			0,00	0,00
					0,00	0,00
		Կոյուղագծի ներքին տեղամաս			0,00	0,00
1	16-269	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում d=110*3.2մմ. փորձարկումով	մ	16	2,87	45,86
2	16-265	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում d=50*2,2մմ. փորձարկումով	մ	4	1,85	7,40
3	17-22	Լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	2	18,42	36,84
4	17-62	Զուգարանակոնքի տեղադրում.	կ-տ	2	27,64	55,28
5	Շուկա	Պոլիվ ստուգիչ մաքրիչ d=110մմ	հատ	1,0	0,63	0,63
6	Շուկա	Եռաբաշխիչ 110*110*110	հատ	6,0	0,66	3,95
7	Շուկա	Արտուղղում 90 º d=110մմ	հատ	3,0	0,35	1,06
8	Շուկա	Արտուղղում 90 º d=50մմ	հատ	2,0	0,11	0,21
9	Շուկա	Ճկախողովակ սիֆոնով d=50 մմ	հատ	2,0	1,67	3,34
					0,00	0,00
10	Շուկա	Ռետինե միջադիր d=50 մմ	հատ	2,0	0,36	0,73
11	Շուկա	Ճկախողովակ զուգարանակոնքի d=110 մմ	հատ	2,0	1,25	2,49
12	23-113	Անցքերի բացում պատերում	100հտ	0,01	30,41	0,30
13	23-117	Անցքերի բացում (միջհարկային ծածկ)	100հտ	0,01	42,01	0,42
14	Շուկա	Պլաստմասե շրջակապ d=110 - 50 մմ	հատ	40,0	0,10	3,88
15	16-60	պողպ պաշտ.պատյան d=133*4,5մմ պաշտ պատյան	մ	0,50	7,31	3,65
16	15-614	խողովակների յուղաներկում /2 անգամ/	100 մ²	0,002	104,75	0,21
		/պաշտպանիչ պատյան/			0,00	0,00
					0,00	0,00
17	20-111	Խողովակների կառուցում ցինկապատ	մ²	0,5	4,45	2,23
		թիթեղից d=150մմ 0.7 մմ հաստ			0,00	0,00
18	20-524	Զոնտի կառուցում ցինկապատ թիթեղից	մ²	0,20	4,68	0,94
19	20-524	Ցինկապատ անցում d=150 - 100 մմ	մ²	0,20	4,68	0,94
20	26-16	Խողովակների մեկուսացում հանքաբամ-	մ³	0,15	15,87	2,38
		բակե ներքնակով -50մմ պատված ֆոլգայով			0,00	0,00
21	ինֆ/տեղ	Հանքաբամբակ ֆոլգայով/արժեք/	մ²	4,00	0,44	1,78
		Ներքին էլեկտրալուսավորություն			0,00	0,00

1	8-603-1	Անասնարդյունաբերական տանիքներում հատակ 18Վտ հզորության LED լամպով	լրա կազմ	1	3,64	3,64
					0,00	0,00
2	5-591-2	Միաստեղ միաբևեռ անջատիչ, ներքին տեղադրման	հատ	3	1,22	3,66
3	10-975-8	Տուփ անջատիչների և վարդակների	100հատ	0.03	82,69	2,48
4	10-975-8	Տուփ բաժանարար ներքին տեղադրման	100հատ	0.03	82,69	2,48
5	8-402-2	Հաղորդալար պղնձե, բազմաջիղ, ՊՎՔ մեկուսացումովկտրվածքը՝ 2*1.5մմ² ԱՔԲՊ	100մ	0.05	37,68	1,88
6	8-402-2	Հաղորդալար պղնձե, բազմաջիղ, կտրվածքը՝ 2*2.5մմ² ԱՔԲՊ	100մ	0,1	51,63	5,16
7	8-418-1	Ճկախողովակ ժ=16մմ	100մ	0,08	33,94	2,71
		Ընդամենը				2075,45
		ԱԱՀ 20%				415,09
		Ընդամենը				2490,54

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
ՀՀ ֆին նախ գործառն վարչ
Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 10
ՀՎՀՀ՝ 06959372
Հ/Հ՝16032022852300
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Մ. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«01» հուլիսի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԶՈՒԳԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ01

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Սպիտակ համայնքի կարիքների համար գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից	2 ամիս
ԸՆԴԱՄԵՆԸ		Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից	2 ամիս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
ՀՀ ֆին նախ գործառն վարչ
Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 10
ՀՎՀՀ՝ 06959372
Հ/Հ՝16032022852300
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Մ. Մելքոնյան

/ստորագրություն/

Կ.Տ.